

չած գիւղին նկատմամբ՝ հաւատան թէ սրբազան պատմութեան դէպքը հոն տեղի ունեցած է:

Արդ, հին ձեռագիրներու և հին թարգմանութիւններու միաձայնութիւնը անբացատրելի է եթէ 160<sup>0</sup> ասպարէզի ընթերցուածքը առաջ է Գ. դարէն. — Սինայականը և իր խումբը նուազ վկաներ են հին աւանդութեան մը քան թէ ուղղագրութեան մը. ուրեմն մենք առաջին իրողութեան վրայ, այսինքն գրաւոր աւանդութեան վիճակին վրայ լուսաբանուած ենք:

Բայց գրաւոր աւանդութիւնը վէճի մէջ է Որոգինէսով, Եւսեբիոսով, Յերոնիմոսով, Սոզոմէնով և այլններկայացուած բերանացի աւանդութեան հետ:

Գալով Որոգինէսի, այժմ մենք գիտենք անոր եղանակը: Անոր Ղուկասի մեկնութիւնը չունինք, չը փորձենք թերին լեցնելու անոր լռութեան հակառակ: Միայն հաստատենք — նախընթաց օրինակները զայն կ'ապացուցանեն — մարդը այսպէս կը խորհէր, բնագիրը կ'ըսէ վաթսուն, բայց Եմմաւուս-Նիկոպոլիսը աւելի հեռու է, սակայն կ'ըսուի թէ Փրկիչը հոն եկած է իր աշակերտներով, ըսենք ուրեմն 160:

Եւսեբիոս կը վկայէ բերանացի աւանդութեան, առանց բան մը ըսելու Աւետարանի բնագրին մասին: Գալով Յերոնիմոսի՝ ան ինքզինքը կ'երկզատէ: Իբր թարգմանիչ Վուլկաթայի՝ կը վկայէ գրաւոր աւանդութեան, վաթսուն ասպարէզին, իբր Պաղեստինցի՝ Աւետարանի Եմմաւուսը կը դնէ ի Նիկոպոլիս: Այս մեծ մարդուն համար կարելի է այս հակասութիւնը: Այո, վասն զի Բեթանիան ու Ճերաչան կը կարգար Աւետարանին մէջ, ու Բեթարբան եւ Գերգեսան կը դնէր Տեղագրութեան մէջ:

Բայց Սոզոմէնը. ան կուտայ թերևս լուծումը: